

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԱՊՀ մասնակից պետությունների՝ համատեղելի ազգային հեռուստաբժշկական համակարգերի ստեղծման եւ դրանց հետագա զարգացման ու օգտագործման գործում համագործակցության մասին

Անկախ Պետությունների Համագործակցության անդամ պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

նպատակ ունենալով ապահովելու համատեղելի հեռուստաբժշկական համակարգեր ստեղծելու գործում համագործակցությունը՝ ԱՊՀ մասնակից պետություններում դրանց ներդրման մասով միջոցառումներ պարունակող նախագծեր ու ծրագրեր ձեւավորելիս եւ իրականացնելիս,

ընդունելով քաղաքացիների առողջության պահպանման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ազգային հեռուստաբժշկական համակարգերի արդյունավետ օգտագործման, ինչպես նաեւ ժամանակակից գիտատար տեխնոլոգիաների եւ նորարարությունների կիրառմամբ ԱՊՀ մասնակից պետությունների առողջապահության համակարգերի կատարելագործման կարելիությունը,

ելնելով համատեղելի ազգային հեռուստաբժշկական համակարգերի զարգացման եւ օգտագործման ոլորտում օրենսդրության մոտարկման անհրաժեշտությունից, ղեկավարվելով այդ բնագավառում միջազգային պայմանագրերով եւ սույն համաձայնագրի մասնակից պետությունների օրենսդրություններով,

ձգտելով սույն համաձայնագրի հետեւողական իրագործմանը.

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Սույն համաձայնագրի նպատակն է ԱՊՀ մասնակից պետությունների համատեղելի ազգային հեռուստաբժշկական համակարգեր ստեղծելը՝ դրանց փոխգործակցության հետագա ապահովմամբ՝ սույն համաձայնագրի մասնակից պետությունների տարածքներում բնակչությանը հանրամատչելի եւ որակյալ բժշկական օգնություն ցուցաբերելու համար՝ անկախ իրենց քաղաքացիների սոցիալական դիրքից եւ բնակության վայրից:

Հոդված 2

Սույն համաձայնագրի նպատակներով գործաձվող եզրույթներն ունեն հետեւյալ նշանակությունները.

հեռուստաբժշկություն՝ հեռավար խորհրդատվական բժշկական ծառայության իրականացումն ապահովող կազմակերպչական, ֆինանսական եւ տեխնոլոգիական միջոցառումների համալիր, որի ժամանակ պացիենտը կամ պացիենտի հետազոտումը կամ բուժումն անմիջականորեն իրականացնող բժիշկն ստանում է այլ բժշկի հեռավար խորհրդատվություն՝ օգտագործելով ազգային ստանդարտներին չհակասող տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաները.

հեռուստաբժշկական ծառայություններ՝ հեռավար հետաձգված բժշկական խորհրդատվություններ, խորհրդատվություններ իրական ժամանակում, պացիենտի օրգանիզմի ֆիզիոլոգիական պարամետրերի հսկողություն, ախտորոշիչ եւ բուժական մանիպուլյացիաների անցկացում, պացիենտի հետազոտումների արդյունքների փոխանակում, այլ բժշկական ծառայություններ, ինչպես նաեւ տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ իրականացվող բժշկական տեսաժողովներ, հեռուստակոնսիլիումներ, հեռուստասեմինարներ, հեռուստադասախոսություններ.

համատեղելի ազգային հեռուստաբժշկական համակարգ՝

հեռուստաբժշկական ծառայությունների մատուցման ազգային համակարգ, որով ապահովվում է հեռուստաբժշկության ոլորտում միջազգային ստանդարտների օգտագործման հիման վրա այլ պետությունների ազգային հեռուստաբժշկական համակարգերի հետ արդյունավետ փոխգործակցությունը:

Հոդված 3

Կողմերն ստեղծում են համատեղելի ազգային հեռուստաբժշկական համակարգեր կամ ապահովում են գոյություն ունեցող ազգային հեռուստաբժշկական համակարգերի համատեղելիությունը՝ սույն համաձայնագրի մասնակից պետություններում որակյալ հեռուստաբժշկական ծառայությունների մատուցման նպատակով՝ բժշկական օգնություն ստանալու եւ ցուցաբերելու ընթացքում ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի՝ պետությունների կողմից երաշխավորված պաշտպանվածության պայմաններում:

Համատեղելի ազգային հեռուստաբժշկական համակարգերի ստեղծման հիմնական խնդիրներն են՝

բժշկական սպասարկման հանրամատչելիության եւ որակի բարձր ստանդարտի ապահովում,

բնակչության սպասարկում եւ որակյալ բժշկական օգնության ցուցաբերում՝ անկախ բնակության վայրից,

համատեղելի ազգային հեռուստաբժշկական համակարգերի կառուցման եւ գործունեության արդյունավետ մեխանիզմների ստեղծում,

առողջապահությունում ժամանակակից բժշկական մեթոդիկաների արագացված փոխանակում եւ ներդրում,

բժշկական կադրերի պատրաստման եւ վերապատրաստման արդյունավետ համակարգի ապահովում,

հեռուստաբժշկության ոլորտի հետ կապված՝ գիտական եւ արդյունաբերական բնագավառների զարգացում,

հեռուստաբժշկական ծառայությունների մատուցման տարբեր հատուկ ծրագրերի իրականացում,

անդրսահմանային հեռուստաբժշկական ծառայությունների նորմատիվ-իրավական ապահովման մշակում,

հեռուստաբժշկության ոլորտում մասնագետների պատրաստում, որակավորման բարձրացում եւ սերտիֆիկացում:

Հոդված 4

Համատեղելի ազգային հեռուստաբժշկական համակարգեր ստեղծելիս Կողմերը պահպանում են հետեւյալ պայմանները՝

մարդկանց առողջության մասին տվյալների արձանագրում՝ առանց անձի արժանապատվության նսեմացման,

մարդուն կոնկրետ տվյալներ հավաքագրելու նպատակի մասին տեղեկացում,

հեռուստաբժշկական համակարգերում պարունակվող՝ մարդու մասին տվյալների անօրինական վերարտադրման հնարավորության բացառում, որը խախտում է քաղաքացիների՝ անձնական տվյալների պաշտպանության իրավունքը՝ սույն համաձայնագրի մասնակից պետությունների օրենսդրությանը համապատասխան,

օրինական հիմքերի վրա հեռուստաբժշկական համակարգում պարունակվող տեղեկատվության գաղտնիության ապահովում եւ այդ տեղեկատվության

սահմանափակում միայն այն տեղեկություններով, որոնք անհրաժեշտ են կոնկրետ հեռուստաբժշկական ծառայության մատուցման համար,

Ֆիզիկական անձանց՝ հեռուստաբժշկական համակարգում իրենց մասին պարունակվող տեղեկատվությանը հասանելիության ապահովում՝ սույն համաձայնագրի մասնակից պետությունների օրենսդրության պահանջներին համապատասխան:

Հոդված 5

Սույն համաձայնագրի մասնակից պետություններում համատեղելի ազգային հեռուստաբժշկական համակարգերի ստեղծման եւ արդյունավետ շահագործման համար Կողմերն ապահովում են ազգային նորմատիվ իրավական ակտերի ընդունումը, որոնցով սահմանվում են՝

բնակչությանը բարձրորակ բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով համատեղելի հեռուստաբժշկական համակարգերի օգտագործման հնարավորությունը,

համատեղելի հեռուստաբժշկական համակարգերի շահագործման ժամանակ անձի եւ քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության միջոցները,

համատեղելի հեռուստաբժշկական համակարգերի մշակմանը եւ շահագործմանը մասնակցող գործադիր իշխանության ազգային մարմինների լիազորությունները, պատասխանատվությունը եւ փոխգործակցությունը,

համատեղելի հեռուստաբժշկական համակարգերում պարունակվող տեղեկատվության հավաքագրման եւ դրան հասանելիության կարգը,

համատեղելի հեռուստաբժշկական համակարգերում պարունակվող տեղեկատվության փաստաթղթավորման, մշակման, պահպանման, ներկայացման, օգտագործման եւ պաշտպանության կարգը,

համատեղելի հեռուստաբժշկական համակարգերի շահագործման հարցերը,

համատեղելի հեռուստաբժշկական համակարգերի գործունեության ապահովման համար անհրաժեշտ՝ միջազգային ստանդարտներին ներդաշնակեցված համատեղելի հեռուստաբժշկական համակարգերի ստեղծման եւ օգտագործման ոլորտում ստանդարտների մշակման եւ ներդրման կարգը:

Հոդված 6

Կողմերը, սույն համաձայնագրին եւ սույն համաձայնագրի մասնակից պետությունների օրենսդրությանը համապատասխան, ստեղծում են համատեղելի ազգային հեռուստաբժշկական համակարգեր՝ հետեւյալ բազային սկզբունքներով.

համատեղելի ազգային հեռուստաբժշկական համակարգերի շահագործմանը փուլային անցում՝ սույն համաձայնագրի մասնակից պետություններում դրանց ծավալման ընթացքում.

ազգային եւ միջպետական մակարդակներում համատեղելի հեռուստաբժշկական համակարգերի ստեղծման ոլորտում միջազգային ստանդարտներին ներդաշնակեցված ստանդարտների օգտագործում,

հեռուստաբժշկական ծառայությունների կազմակերպման համար բժշկական օգնության փոխընդունելի ստանդարտների օգտագործում, մշակում եւ համապատասխանեցում,

համատեղելի հեռուստաբժշկական համակարգերի ապահովում տեղեկատվության պաշտպանության արդիական մեթոդներով եւ միջոցներով՝ դրա մշակման, փոխանակման եւ պահպանման գործընթացներում,

անձնական բժշկական տեղեկատվությանը հեռավար պաշտպանված արտոնված հասանելիության ապահովում, այդ թվում՝ իրական ժամանակի ռեժիմում՝ հեռուստաբժշկական ծառայությունների մատուցման գործընթացի մասնակիցների համար,

սույն համաձայնագրի մասնակից պետությունների համատեղելի ազգային հեռուստաբժշկական համակարգերի փոխգործակցության հնարավորության ապահովում՝ երրորդ պետությունների հեռուստաբժշկական համակարգերի, ինչպես նաև առողջապահության ոլորտում այլ տեղեկատվական համակարգերի եւ ռեսուրսների, անձնական տվյալների հաշվառման համակարգերի հետ,

համատեղելի ազգային հեռուստաբժշկական համակարգերի գործունեության ոլորտում միջպետական տեղեկատվական փոխանակման ապահովում:

Լիազորված մարմինները կամ կազմակերպություններն իրականացնում են Կողմերի միջև փորձի փոխանակում՝ համատեղելի ազգային հեռուստաբժշկական համակարգերի տեխնոլոգիաների ու սարքավորումների մշակման եւ օգտագործման, համատեղելի ազգային հեռուստաբժշկական համակարգերի ստեղծման եւ գործունեության առնչությամբ գիտամեթոդական, կազմակերպչական եւ այլ հարցերով, անձնական բժշկական տեղեկատվության պաշտպանության մեթոդների եւ միջոցների ստեղծման ու օգտագործման հարցերով:

Հոդված 7

Սույն համաձայնագրի շրջանակներում համատեղելի ազգային հեռուստաբժշկական համակարգերի ստեղծման եւ արդյունավետ օգտագործման համար Կողմերը, սույն համաձայնագրի մասնակից պետությունների օրենսդրությանը համապատասխան, ապահովում են՝

սույն համաձայնագրի մասնակից պետություններում գոյություն ունեցող ազգային հեռուստաբժշկական համակարգերի եւ դրանց հետ կապված այլ տեղեկատվական հաղորդակցական համակարգերի փոխադարձ ուսումնասիրությունների անցկացումը,

գոյություն ունեցող ազգային հեռուստաբժշկական համակարգերի համատեղելիության ապահովման կամ անդրսահմանային տեղեկատվական փոխգործակցության կազմակերպման համար համատեղելի ազգային

հեռուստաթժշկական համակարգերի մշակման վերաբերյալ առաջարկների մշակումը՝ հաշվի առնելով տեղեկատվական անվտանգության պահանջները,

համատեղելի ազգային հեռուստաթժշկական համակարգերի գործունեության համար հեռուստաթժշկական տեխնոլոգիաների ու սարքավորումների միջազգային ստանդարտների, ինչպես նաև համակարգերի հետ աշխատող՝ տեղեկատվության պաշտպանության միջոցների մշակման գործում մասնակցությունը,

համատեղելի ազգային հեռուստաթժշկական համակարգերի շահագործման ընթացքում տարբեր խնդիրներ լուծելիս առաջին հերթին անձնական բնույթի տվյալներով պաշտպանված տեղեկատվության փոխանակման կազմակերպումը,

համատեղելի ազգային հեռուստաթժշկական համակարգերի ստեղծման եւ գործունեության ժամանակ օգտագործվող փաստաթղթերի պետական տեղեկատվական բանկերի ստեղծումը,

ազգային հեռուստաթժշկական համակարգերի փոխգործակցության ժամանակ տեղեկատվության դասակարգման եւ ծածկագրման համատեղելի համակարգի օգտագործումը:

Հոդված 8

Սույն համաձայնագրի իրականացման համատեղ միջոցառումների ֆինանսավորումն իրականացվում է սույն համաձայնագրի մասնակից պետությունների կողմից ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդի որոշմամբ՝ ազգային բյուջեների՝ այդ նպատակների համար նախատեսվող միջոցների, ինչպես նաև արտաբյուջետային միջոցների հաշվին:

Հոդված 9

Հեռուստաթժշկական խորհրդատվությունների անցկացման հետ կապված անձնական տվյալների անդրսահմանային փոխանցումը սույն համաձայնագրի

մասնակից պետությունների կողմից իրականացվում է սույն համաձայնագրի մասնակից պետությունների՝ անձնական տվյալների պաշտպանության մասին օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 10

Սույն համաձայնագրի իրականացման համար պատասխանատու են այն լիազորված մարմինները կամ կազմակերպությունները, որոնց ցանկը սահմանվում է յուրաքանչյուր Կողմի կողմից եւ փոխանցվում է ավանդապահին սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին ծանուցումը հանձնելիս:

Կողմերից յուրաքանչյուրը 30 օրվա ընթացքում ավանդապահին գրավոր ծանուցում է իր լիազորված մարմինների կամ կազմակերպությունների ցանկի փոփոխությունների մասին:

Հոդված 11

Համատեղելի ազգային հեռուստաբժշկական համակարգերի զարգացմանն ուղղված համատեղ միջոցառումների անցկացումն իրականացվում է իրավահավասարության եւ փոխշահավետության սկզբունքներով՝ հաշվի առնելով սույն համաձայնագրի յուրաքանչյուր մասնակից պետության տնտեսական եւ աշխարհագրական առանձնահատկությունները:

Հոդված 12

Սույն համաձայնագրով չեն շոշափվում Կողմերից յուրաքանչյուրի՝ միջազգային այլ պայմանագրերից բխող իրավունքներն ու պարտավորությունները, որոնց մասնակիցն է այդ Կողմի պետությունը:

Հոդված 13

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ սույն համաձայնագրում կարող են կատարվել դրա անբաժանելի մասը կազմող փոփոխություններ եւ լրացումներ, որոնք ձեւակերպվում են համապատասխան արձանագրությամբ եւ ուժի մեջ են մտնում սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար նախատեսված կարգով:

Հոդված 14

Սույն համաձայնագրի կիրառման եւ մեկնաբանման առնչությամբ Կողմերի միջեւ ծագող վիճելի հարցերը կարգավորվում են շահագրգիռ Կողմերի միջեւ խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով կամ Կողմերի կողմից համաձայնեցված այլ ընթացակարգով:

Հոդված 15

Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի կողմից համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

Հոդված 16

Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո բաց է ԱՊՀ ցանկացած մասնակից պետության, ինչպես նաեւ սույն համաձայնագրի նպատակներն ու սկզբունքներն ընդունող ցանկացած այլ պետության՝ միանալու մասին փաստաթղթերն ավանդապահին փոխանցելու միջոցով միանալու համար:

ԱՊՀ մասնակից պետության համար սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթուղթն ավանդապահի կողմից ստանալու ամսաթվից 30 օրը լրանալուց հետո:

ԱՊՀ մասնակից չհանդիսացող պետության համար սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրած կամ դրան միացած պետությունների՝ այդպիսի միանալու վերաբերյալ համաձայնության մասին վերջին ծանուցումն ավանդապահի կողմից ստանալու ամսաթվից 30 օրը լրանալուց հետո:

Հոդված 17

Սույն համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով: Կողմերից յուրաքանչյուրն իրավասու է դուրս գալու սույն համաձայնագրից՝ ոչ ուշ, քան դուրս գալուց 6 ամիս առաջ՝ իր այդ մտադրության մասին գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին եւ կարգավորելով սույն համաձայնագրի գործողության ընթացքում ծագած պարտավորությունները:

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում, 2010 թվականի նոյեմբերի 19-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեում, որը սույն համաձայնագիրն ստորագրած յուրաքանչյուր պետություն կուղարկի դրա հաստատված պատճենը:

**Ադրբեջանի Հանրապետության
կառավարության կողմից՝**

**Ռուսաստանի Դաշնության
կառավարության կողմից՝**

Առաջին փոխվարչապետ

Յա. Էյուբով

Վ. Պուտին

(հատուկ կարծիքով)

**Հայաստանի Հանրապետության
կառավարության կողմից՝**

Տ. Սարգսյան

(հատուկ կարծիքով)

**Տաջիկստանի Հանրապետության
կառավարության կողմից՝**

Ա. Ակիլով

**Բելառուսի Հանրապետության
կառավարության կողմից՝**

Ս. Սիդորդսկի

**Թուրքմենստանի կառավարության
կողմից՝**

**Ղազախստանի Հանրապետության
կառավարության կողմից՝**

**Ուզբեկստանի Հանրապետության
կառավարության կողմից՝**

Արտաքին տնտեսական կապերի,
ներդրումների և առևտրի նախարար,
վարչապետի տեղակալ՝

Է. Գանիեւ

**Ղրղզստանի Հանրապետության
կառավարության կողմից՝**

Ռ. Օտունբաեւ

Ուկրաինայի կառավարության կողմից՝

Ն. Ազարով

**Մոլդովայի Հանրապետության
կառավարության կողմից՝**

Վ. Ֆիլատ

(վերապահումով)

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Ադրբեջանի Հանրապետության

Բացառությամբ հետեւյալ արտահայտությունների՝ նախաբանի 4-րդ պարբերության մեջ «ոլորտում օրենսդրության մոտարկման», 6-րդ հոդվածի 7-րդ պարբերության մեջ «երրորդ պետությունների հեռուստաբժշկական համակարգերի, ինչպես նաեւ», 17-րդ հոդվածում «եւ կարգավորելով սույն համաձայնագրի գործողության ընթացքում ծագած պարտավորությունները»:

Ադրբեջանի Հանրապետությունը «սույն համաձայնագրի մասնակից պետությունների օրենսդրություն» արտահայտությունը համաձայնագրի ամբողջ տեքստում ընկալում է որպես «ազգային օրենսդրություն», իսկ 11-րդ հոդվածում «Համատեղ միջոցառումների անցկացում» արտահայտությունն ընկալում է որպես «Համագործակցություն»:

Սույն համաձայնագիրն իրականացնելիս Ադրբեջանի Հանրապետությունը կառաջնորդվի ազգային օրենսդրությամբ եւ կմասնակցի պետական բյուջեում յուրաքանչյուր տարի այդ նպատակների համար նախատեսվող միջոցների շրջանակներում:

Սույն համաձայնագրում շարադրված ոչ մի իրավունք, պարտականություն եւ դրույթ Ադրբեջանի Հանրապետության կողմից չի կիրառվի Հայաստանի Հանրապետության նկատմամբ, քանի դեռ Հայաստանի Հանրապետությունը չի ազատագրել Ադրբեջանի Հանրապետության բոլոր օկուպացված տարածքները եւ ամբողջությամբ չի վերացրել ագրեսիայի հետեւանքները:

Ադրբեջանի Հանրապետության

առաջին փոխվարչապետ՝

Յա. Էյուբով

ՎԵՐԱՊԱՀՈՒՄ

Հայաստանի Հանրապետության

Հայաստանի Հանրապետությունը կմասնակցի համատեղելի ազգային հեռուստաթշկական համակարգերի ստեղծման մասին տվյալ համաձայնագրի իրականացմանը՝ այդ նպատակների համար պետական բյուջեով նախատեսված միջոցների սահմաններում:

Հայաստանի Հանրապետությունը չի ընդունում «ԱՊՀ մասնակից պետությունների՝ համատեղելի ազգային հեռուստաթշկական համակարգերի ստեղծման եւ դրանց հետագա զարգացման ու օգտագործման գործում համագործակցության մասին» համաձայնագրի վերաբերյալ Ադրբեջանի Հանրապետության հատուկ կարծիքը, քանի որ այն անհամատեղելի է նշված փաստաթղթի օբյեկտի եւ նպատակների հետ, ինչպես նաեւ խեղաթյուրում է Լեռնային Ղարաբաղի խնդրի էությունը ընդհարման իրական պատճառների եւ հետեւանքների հարցում, որոնք ծագել են Ադրբեջանի Հանրապետության կողմից ժողովրդի ազատ կամքի արտահայտման դեմ ռազմական ուժի եւ ԼՂՀ-ի դեմ ագրեսիայի կիրառման հետեւանքով:

Հայաստանի Հանրապետության

վարչապետ՝

S. Սարգսյան

ՎԵՐԱՊԱՀՈՒՄ

Մոլդովայի Հանրապետության

Մոլդովայի Հանրապետությունը կմասնակցի սույն համաձայնագրի դրույթների իրականացմանը՝ տվյալ ոլորտում ունեցած իր միջազգային պարտավորություններին համապատասխան, ինչպես նաև յուրաքանչյուր տարի ազգային բյուջեում նախատեսվող ֆինանսական միջոցների սահմաններում եւ հատուկ միջոցների հաշվին:

Մոլդովայի Հանրապետության

վարչապետ՝

Վ. Ֆիլատ